ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 2000 թվականի հոկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին Համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, 2000 թվականի հոկտեմբերի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 8-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին Համաձայնագրում հետևյալ փոփոխությունը կատարելու մասին՝

Հոդված 1

Համաձայնագրի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Ապրանքների արտահանման ժամանակ հարկման սկզբունքը

Արտահանման մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները, որոնք արտահանվում են մի Կողմի պետության մաքսային տարածքից և ներմուծվում են մյուս Կողմի պետության մաքսային տարածք, հարկվում են անուղղակի հարկերով զրոյական դրույքաչափով՝ համապատասխան Կողմի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվան հաջորդող ամսվա մեկից, որի ընթացքում դիվանագիտական ուղիներով ստացվել է Կողմերի կողմից սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2007 թվականի սեպտեմբերի 25-ին երկու օրինակով՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝

ПРОТОКОЛ

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о внесении изменения в Соглашение между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о принципах взимания косвенных налогов во взаимной торговле от 20 октября 2000 года

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, именуемые далее Сторонами, в соответствии со статьей 8 Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о принципах взимания косвенных налогов во взаимной торговле от 20 октября 2000 года (далее Соглашение),

согласились о внесении в Соглашение следующего изменения:

Статья 1

Статью 3 Соглашения изложить в следующей редакции:

“Статья 3.Принцип налогообложения при вывозе товаров

Товары, помещенные под таможенный режим экспорта, вывозимые с таможенной территории государства одной Стороны и ввозимые на таможенную территорию государства другой Стороны, облагаются косвенными налогами по нулевой ставке в порядке, установленном законодательством государства соответствующей Стороны.”

Статья 2

Настоящий Протокол вступает в силу с первого числа месяца, следующего за месяцем в течение которого по дипломатическим каналам получено последнее письменное уведомление о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для вступления настоящего Протокола в силу.

Совершено в г. Москва, 25 октября 2007г. в двух экземплярах, на армянском и русском языках, причем оба текста имеют одинаковую силу.

За Правительство Республики Армения

За Правительство Российской Федерации